

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2007 թվապահի ԱՊՐԻԼԻ 15-ԻՆ ԿԱՀԻՐԵՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՓՈԽԱԴԱՐՁ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

7 սեպտեմբերի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի,
Զ. Ղուկասյանի, Ռ. Պապայանի (զեկուցող),

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-
րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի ապրիլի 15-ին
Կահիրեում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Եգիպտոսի Արաբական
Հանրապետության միջև քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին
պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության
Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը՝
մուտքագրված 2007 թվականի հուլիսի 18-ին:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետու-
թյան Նախագահի պաշտոնական ներկայացուցչի՝ ՀՀ արդարադատության նախարար
Գ. Դանիելյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով պայմանագիրը և գործում

առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Պայմանագիրն ստորագրվել է 2007թ. ապրիլի 15-ին Կահիրեում՝ Հայաստանի Հանրապետության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջև քրեական գործերով փոխադարձ իրավական օգնություն տրամադրելու իրավական հիմքն ամրապնդելու նպատակով:

2. Կողմերը պարտավորվում են տրամադրել միմյանց իրավական օգնություն, եթե արարքը, որի համար հարցում է ներկայացվել, քրեորեն պատժելի է երկու Կողմերի օրենքներով: Կողմի հայեցողությանն է թողնված իրավական օգնության տրամադրումն այն դեպքերում, երբ արարքը, որի առնչությամբ հարցում է ստացվել, հայցվող կողմի օրենսդրությամբ քրեորեն պատժելի չէ: Պայմանագիրը տարածվում է հանցագործությունների կատարման առնչությամբ հետաքննությունների, քննությունների և դատական ընթացակարգերի վրա՝ համաձայն Կողմերի քրեական օրենսդրությունների:

3. Պայմանագրում նշված են իրավական օգնության շրջանակը, պայմանագրի նպատակների իրագործման համար պատասխանատու կենտրոնական մարմինները (Հայկական կողմի համար գլխավոր դատախազությունը՝ եթե գործերը գտնվում են նախաքննության փուլում, և արդարադատության նախարարությունը՝ եթե գործերը դատական վարույթում են կամ վճիռների կատարման փուլում, իսկ Եգիպտական կողմի համար՝ արդարադատության նախարարությունը), նկարագրված են հարցման ձևն ու բովանդակությունը, հարցումների մերժման կամ հետաձգման հիմքերը:

4. Փոխադարձ կարգով Հայկական կողմը նաև պարտավորվում է.

- բացառել երկու Կողմերի մասնակցությամբ գործող միջազգային և տարածաշրջանային կոնվենցիաների համաձայն ահաբեկչության հանցագործությունների հարցերով իրավական օգնության մերժումը,

- գաղտնի պահել իրավական օգնության համար հարցումը և դրա բովանդակությունը, լրացուցիչ փաստաթղթերը և հարցման համաձայն կատարված որևէ գործողություն,

- առանց հայցվող կողմի թույլտվության չօգտագործել համապատասխան տեղեկատվությունը կամ վկայություններն այլ նպատակով, հարցումները կատարել հայցվող կողմի օրենքներին և սույն պայմանագրի դրույթներին համապատասխան,

- իրավական օգնությունը տրամադրել ըստ հարցման մեջ նշված ձևի և հատուկ ընթացակարգերի՝ այնքանով, որքանով դրանք չեն հակասում ՀՀ օրենքներին,

- իր ներքին օրենքներին համապատասխան ջանքեր գործադրել՝ պարզելու համար հարցման մեջ նշված անձանց և իրերի գտնվելու վայրն ու ինքնությունը:

5. Պայմանագրով երաշխավորվում է վկայություն տալու, փորձաքննություն անցկացնելու կամ այլ ընթացակարգային գործողություններ կատարելու համար հանդես եկող անձի անձեռնմխելիությունը՝ անկախ նրա քաղաքացիությունից: Եթե այդ անձը կալանավորված է կամ պատիժ է կրում ազատագրկման ձևով, հայցվող կողմի համաձայնությամբ նա կարող է ժամանակավորապես փոխանցվել հայցող կողմին, ընդ որում, ոչ ավելի, քան 90 օր ժամկետով: Անձի փոխանցումը մերժվում է, եթե կալանավորված կամ պատիժ կրող անձը չի տալիս իր գրավոր համաձայնությունը, կամ եթե այդ անձի մասնակցությունն անհրաժեշտ է հայցվող կողմի տարածքում դատական ընթացակարգերում:

Պայմանագրի 6-րդ հոդվածը սահմանում է իրավական օգնություն տրամադրելու համար հարցումների մերժման կամ հետաձգման հիմքերն ու կարգը:

Կողմերը նաև պարտավորվում են համագործակցել հանցագործության գործիքների և եկամուտների բացահայտման ոլորտում՝ հիմք ընդունելով սույն պայմանագրի և ՄՍԿ-ի՝ 2000թ. Անդրազգային կազմակերպված հանցագործության դեմ կոնվենցիայի դրույթները:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2007 թվականի ապրիլի 15-ին Կահիրեում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջև քրեական

գործերով փոխադարձ իրավական օգնության մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

7 սեպտեմբերի 2007 թվականի
ՍԴՈ-712